

Հարգելի՛ վարկառուներ,

Ընկերության VIVUS.AM վարկատեսակից օգտվող այն վարկառուները, որոնց.

- **վճարման օրն ընկած է 2020 թվականի հունիսի 06-ից հունիսի 30-ը ներառյալ ժամանակահատվածում,** Տարբերակ Ա-ով նախատեսված ժամկետում և 30% չափով միանվագ վճարումը կատարելով կհամարվեն Ընկերության սույն առաջարկի (օֆերտայի) Տարբերակ Ա-ի պայմաններին համաձայնություն տված: Այդ վարկառուների համար հերթական վճարման (մարման) օրվա հետաձգումը կիրականացվի Տարբերակ Ա-ի պայմաններով: Սույն առաջարկի (օֆերտայի) այս կետում նշված պայմաններով հետաձգման հնարավորությունից օգտվելու համար սահմանված կարգով միանվագ վճարումը չկատարելու դեպքում, վարկի գծով մարումները պետք է իրականացվեն վարկի մարման գործող ժամանակացույցին համապատասխան:

Ընկերության KIMBI.AM վարկատեսակից օգտվող այն վարկառուները, որոնց.

- **վճարման օրն ընկած է 2020 թվականի հունիսի 06-ից հունիսի 30-ը ներառյալ ժամանակահատվածում,** Տարբերակ Ա-ով նախատեսված ժամկետում և 30% չափով միանվագ վճարումը կատարելով, կհամարվեն Ընկերության սույն առաջարկի (օֆերտայի) Տարբերակ Ա-ի պայմաններին համաձայնություն տված: Այդ վարկառուների համար հերթական վճարման (մարման) օրվա հետաձգումը կիրականացվի Տարբերակ Ա-ի պայմաններով:
- **վճարման օրն ընկած է 2020 թվականի հունիսի 06-ից հունիսի 30-ը ներառյալ ժամանակահատվածում և ովքեր նախկինում չեն օգտվել** Ընկերության առաջարկած որևէ պայմանով հետաձգման հնարավորությունից, վարկի մարման ժամանակացույցով նախատեսված հերթական վճարման (մարման) օրվանից հետո մինչև 3-րդ օրը ներառյալ չեն կատարի Տարբերակ Ա-ով նախատեսված ժամկետում 30% չափով միանվագ վճարումը և վարկի մարման ժամանակացույցով նախատեսված հերթական վճարման (մարման) օրը վճարումը չկատարելու դեպքում, կհամարվեն Տարբերակ Բ-ի պայմաններին համաձայնություն տված: Այդ վարկառուների համար հերթական վճարման (մարման) օրվա հետաձգումը կիրականացվի Տարբերակ Բ-ի պայմաններով:
- **վճարման օրն ընկած է 2020 թվականի հունիսի 06-ից հունիսի 30-ը ներառյալ ժամանակահատվածում և ովքեր արդեն օգտվել են** Ընկերության առաջարկած որևէ պայմանով հետաձգման հնարավորությունից, վարկի մարման ժամանակացույցով նախատեսված հերթական վճարման (մարման) օրվանից հետո մինչև 3-րդ օրը ներառյալ չեն կատարի Տարբերակ Ա-ով նախատեսված ժամկետում 30% չափով միանվագ վճարումը և վարկի մարման ժամանակացույցով նախատեսված հերթական վճարում չկատարելու դեպքում, կհամարվեն Տարբերակ Գ-ի պայմաններին համաձայնություն տված: Այդ վարկառուների համար հերթական վճարման (մարման) օրվա հետաձգումը կիրականացվի Տարբերակ Գ-ի պայմաններով:

Բոլոր այն վարկառուներն, ովքեր չեն ցանկանա օգտվել սույն առաջարկով (օֆերտայով) Ընկերության կողմից ընձեռնված հնարավորությունից, խնդրում ենք հրաժարման մասին գրավոր դիմումով տեղեկացնել Ընկերությանը: Այդ դեպքում վճարումն անհրաժեշտ կլինի իրականացնել վարկի մարման ընթացիկ ժամանակացույցին համապատասխան:

ՈւՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Վերը նշված առաջարկը (օֆերտան) չի կիրառվում երաշխավորությամբ ապահովված վարկային պայմանագրերի դեպքում: Այդ պայմանագրերի շրջանակում հետաձգումների մանրամասներին տեղեկանալու համար անհրաժեշտ է կապ հաստատել Ընկերության հետ հետևյալ (098) 588-005 հեռախոսահամարով:

Տարբերակ Ա. Մինչև 3 օր ժամկետանց պարտավորություն ունենալու դեպքում.

Անհրաժեշտ է վճարման (մարման) նախորդող օրվանից սկսած մինչև 3-րդ ժամկետանց օրը ներառյալ կատարել վարկային պայմանագրով նախատեսված վճարման ենթակա նվազագույն պարտադիր (պարբերական) վճարի առնվազն 30% չափով միանվագ վճարում, որը նվազեցվելու է այդ օրվա դրությամբ առկա վարկային պարտավորության ընդհանուր գումարից: Վճարման արդյունքում վարկային պայմանագրով սահմանված վճարման (մարման) օրը հետաձգվում է միանվագ վճարման կատարման օրվանից 31 օր ժամկետով: Հետաձգման օրվա դրությամբ առկա հաշվեգրված տոկոսագումարը, վարկի սպասարկման վճարը և այլ տեսակի բոլոր վճարները (առկայության դեպքում) անփոփոխ տեղափոխվում են հետաձգվող առաջիկա մարման օրը:

Հետաձգված ժամկետի համար վարկի տոկոսագումար, սպասարկման վճար և տույժ չի հաշվարկվում, վարկը չի համարվում ժամկետանց:

Հետաձգման արդյունքում փոփոխվում է վարկի մարման ժամանակացույցը, որի նոր (փոփոխված) տարբերակը մինչև այդ ժամանակացույցով նախատեսված առաջիկա վճարման օրը կտրամադրվի Ընկերությունում գրանցված Ձեր էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով: Վարկային պայմանագրով սահմանված հետագա վճարումները ենթակա կլինեն կատարման տրամադրված մարման նոր (փոփոխված) ժամանակացույցին համապատասխան, որը կհանդիսանա վարկային պայմանագրի անբաժանելի մասը:

Տարբերակ Ա. Մինչև 3 օր ժամկետանց պարտավորություն ունենալու դեպքում.

Անհրաժեշտ է վճարման (մարման) նախորդող օրվանից սկսած մինչև 3-րդ ժամկետանց օրը ներառյալ կատարել տվյալ ամսվա հերթական վճարի առնվազն 30% չափով միանվագ վճարում, որը նվազեցվելու է այդ օրվա դրության առկա վարկային պարտավորության ընդհանուր գումարից: Վճարման արդյունքում վարկային պայմանագրով սահմանված վճարման (մարման) օրը հետաձգվում է միանվագ վճարման կատարման օրվանից 31 օր ժամկետով, նույն ժամկետով երկարաձգվում է նաև վարկային պայմանագրով սահմանված վարկի ամբողջական մարման (ավարտի) ժամկետը: Հետաձգման օրվա դրությամբ առկա հաշվեգրված տոկոսագումարը, վարկի սպասարկման վճարը և այլ տեսակի բոլոր վճարները (առկայության դեպքում) անփոփոխ տեղափոխվում են հետաձգվող առաջիկա մարման օրը:

Հետաձգված ժամկետի համար վարկի տոկոսագումար, սպասարկման վճար և տույժ չի հաշվարկվում, վարկը չի համարվում ժամկետանց:

Հետաձգման արդյունքում փոփոխվում է վարկի մարման ժամանակացույցը, որի նոր (փոփոխված) տարբերակը մինչև այդ ժամանակացույցով նախատեսված առաջիկա վճարման օրը կտրամադրվի Ընկերությունում գրանցված Ձեր էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով: Վարկային պայմանագրով սահմանված հետագա վճարումները ենթակա կլինեն կատարման տրամադրված մարման նոր (փոփոխված) ժամանակացույցին համապատասխան, որը կհանդիսանա վարկային պայմանագրի անբաժանելի մասը:

Տարբերակ Բ. Մինչև 4 օր ժամկետանց պարտավորություն ունենալու դեպքում

Վարկի մարման ժամանակացույցով նախատեսված հերթական վճարման (մարման) օրվանից հետո 4-րդ օրվա դրությամբ հերթական վճարում չկատարելու կամ ոչ ամբողջական վճարում կատարելու կամ տվյալ ամսվա հերթական վճարի առնվազն 30%-ի չափով միանվագ վճարում չկատարելու դեպքում, վարկային պայմանագրով

սահմանված վճարման (մարման) օրը հետաձգվում է 34 օր ժամկետով, նույն ժամկետով երկարաձգվում է նաև վարկային պայմանագրով սահմանված վարկի ամբողջական մարման (ավարտի) ժամկետը:

Հետաձգման օրվա դրությամբ հաշվեգրված տոկոսագումարը՝ առաջիկա ամսվանից սկսած, իսկ հետաձգման ժամկետի համար հաշվարկվող վարկի սպասարկման վճարը՝ երկրորդ ամսվանից սկսած, համամասնորեն բաշխվում են վարկի մնացորդային ժամկետի վրա: Հետաձգվող ժամկետի համար տույժ չի հաշվարկվում և վարկը ժամկետանց չի համարվում: Հետաձգման օրվա դրությամբ հաշվեգրված սպասարկման վճարը և հետաձգված ժամկետի համար հաշվեգրվող տոկոսագումարը, տեղափոխվում են հետաձգվող առաջիկա մարման օրը:

Հետաձգման արդյունքում փոփոխվում է վարկի մարման ժամանակացույցը, որի նոր (փոփոխված) տարբերակը մինչև այդ ժամանակացույցով նախատեսված առաջիկա վճարման օրը կտրամադրվի Ընկերությունում գրանցված Ձեր էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով: Վարկային պայմանագրով սահմանված հետագա վճարումները ենթակա կլինեն կատարման տրամադրված մարման նոր (փոփոխված) ժամանակացույցին համապատասխան, որը կհանդիսանա վարկային պայմանագրի անբաժանելի մասը:

Բոլոր այն վարկառուներին, ովքեր չեն ցանկանում օգտվել ընձեռնված հնարավորությունից, խնդրում ենք մինչև վարկի մարման ժամանակացույցով նախատեսված, հետաձգման ենթակա վճարման օրվան հաջորդող 3-րդ օրը ներառյալ հրաժարման մասին տեղեկացնել Ընկերությանը գրավոր, այդ թվում նաև՝ էլեկտրոնային փոստի միջոցով դիմումի տեսքով:

Տարբերակ Գ. Մինչև 15 օր ժամկետանց պարտավորություն ունենալու դեպքում

Վարկի մարման ժամանակացույցով նախատեսված հերթական վճարման (մարման) օրվանից հետո 4-րդ օրվա դրությամբ հերթական վճարի առնվազն 30%-ի չափով միանվագ վճարում չկատարելու դեպքում և հերթական վճարման (մարման) օրվանից հետո 15-րդ օրվա դրությամբ հերթական վճարում չկատարելու կամ ոչ ամբողջական վճարում կատարելու դեպքում, վարկային պայմանագրով սահմանված վճարման (մարման) օրը հետաձգվում է 46 օր ժամկետով, նույն ժամկետով երկարաձգվում է նաև վարկային պայմանագրով սահմանված վարկի ամբողջական մարման (ավարտի) ժամկետը:

Հետաձգման օրվա դրությամբ հաշվեգրված տոկոսագումարը, առաջիկա ամսվանից սկսած իսկ հետաձգման ժամկետի համար հաշվարկվող վարկի սպասարկման վճարը երկրորդ ամսվանից սկսած համամասնորեն բաշխվում են վարկի մնացորդային ժամկետի վրա: Հետաձգվող ժամկետի համար տույժ չի հաշվարկվում: Հետաձգման օրվա դրությամբ հաշվեգրված սպասարկման վճարը և հետաձգված ժամկետի համար հաշվեգրվող տոկոսագումարը, տեղափոխվում են հետաձգվող առաջիկա մարման օրը:

Հետաձգման արդյունքում փոփոխվում է վարկի մարման ժամանակացույցը, որի նոր (փոփոխված) տարբերակը մինչև այդ ժամանակացույցով նախատեսված առաջիկա վճարման օրը կտրամադրվի Ընկերությունում գրանցված Ձեր էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով: Վարկային պայմանագրով սահմանված հետագա վճարումները ենթակա կլինեն կատարման տրամադրված մարման նոր (փոփոխված) ժամանակացույցին համապատասխան, որը կհանդիսանա վարկային պայմանագրի անբաժանելի մասը:

Բոլոր այն վարկառուներին, ովքեր չեն ցանկանում օգտվել ընձեռնված հնարավորությունից, խնդրում ենք մինչև վարկի մարման ժամանակացույցով նախատեսված, հետաձգման ենթակա վճարման օրվան հաջորդող 3-րդ օրը ներառյալ հրաժարման մասին տեղեկացնել Ընկերությանը գրավոր, այդ թվում նաև՝ էլեկտրոնային փոստի միջոցով դիմումի տեսքով:

Հարցերի և պարզաբանումների համար կարող եք զանգահարել (098) 588 005 հեռախոսահամարով: Առողջություն և բարեկեցություն ենք մաղթում Ձեզ ու Ձեր ընտանիքին:

Հարգանքով,
«Գուդկրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ

«Գուդկրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ն վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: